տոս Աստուած մեր և զամենայն հաւատացեալս անուան իւրոյ յայսպիսի կործանմանէ, ամէն։

Յաւուրս սորա և Պետրոս երէց ոմն ի Սուրբ Նիկողայոս եկեղեցոյ, երկրաւ Տիվրիկցի (Ռէէ)։

Հրեայ վէզիրին յոյժ սիրելի՝ խորհեալ ընդ ազգին Յունաց և մեր Եղիազար վարդապետին, յամենայն ամի որքան ժողովէին զըստակ քիւրէքճոյ՝ այնքան ժողովեցին և ետուն վէզիրին և առին խէթիշէրիֆ, զի բնաւ բարձցի այն։ Եւ յետ եկեալքն ոչ համարեցան զգիր թագաւորին և ոչ իսկ, այլ ըստ առաջնոյն կըրկին ժողովեցին և առաջին տվեալն կորեաւ և կորեաւ։

(ՌՃԱ = 1652)

Յայսմ ամի եկ Փիլիպպոս կաթողիկոս յաթոռոյն և Ներսէս կաթողիկոսն Սըսայ՝ միակամ խորհրդով գնացին ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, յերկրպագութիւն աստուածընկալ Սուրբ Գերեզմանին և ամենայն տնօրինականաց Տեառն մերոյ և Փրկչին Աստուծոյ մերոյ։ Յորում ամի մտանէր թվականն Հայոց ՌՃԱ և լինէր Զատիկ Ապրիլի ԺԸ, որք հայրապետքն անդ եղեն. և Ներսէս կաթողիկոսն դարձաւ ի յաթոռն իւր ի Սիս։ Եւ քաղաքացիքս յառաջադէմ՝ յարքունուստ հրաման առեալ էին թագաւորի ծառայութք, զի յիշխանութիւնս Տաճկաց ընդ կաթողիկոսին չրջիցին մինչ յԵրուսաղէմ, և անտի մեծաւ փառօք բերեալ աստ ի քաղաքս Ստամպոլ։

Թվին Հայոց ՌՃ և Ա–ն և Ապրիլ ամսոյ Ժ և Ը–ն